ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ N 3

«ՀՀՌՑ-ԳՀԱՊՁԲ-19/13/1» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգով էլեկտրական սարքերի ձեռքբերման գնահատող հանձնաժողովի գնահատման նիստի

Գնահատող հանձնաժողովի նիստը տեղի է ունեցել 03.05.2019 ժամը 15.00

Մասնակցում էին՝

Հանձնաժողովի նախագահ՝

Գնման Պատասխանատու /Գնահատման Աշխատակազմի Պատասխանատու՝ ԳՊ/ԳԱՊ/ Ս. Դավթյանը

Անդամներ՝

Գնման Պատասխանատու /Գնահատման Աշխատակազմ՝ ԳՊ/ԳԱ/ Ս. Քոչարյանը

Լ. Հարությունյանը

Գնման Պատասխանատու /Բացման Աշխատակազմ՝ ԳՊ/ԲԱ/՝ Լ. Կաբասակալյանը

Կ. Եսայանը

Հանձնաժողովի քարտուղար՝

Գնման Պատասխանատու /Մրցույթի համակարգող՝ ԳՊ/ՄՀմ/ Մ. Նիկոլյանը

1. <u>Ընդունել ի գիտություն.</u>

1.1 ՀՀ կառավարության 04.05.2017թ. թիվ 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի /Կարգ/ 43-րդ կետի 3-րդ ենթակետի համաձայն՝ էլեկտրոնային փոստի միջոցով Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտե /Կոմիտե/ 26.04.2019 հարցում է ուղարկվել առաջին տեղը զբաղեցրած մասնակիցներ՝ ՊՌՈ Ինվեստ, Բաղդասարյանս Գրուպ, Հպարտ Քաղաքացի ՍՊ ընկերությունների հայտերը ներկայացնելու օրվա դրությամբ հարկային մարմնի կողմից վերահսկվող եկամուտների գծով ժամկետանց պարտավորությունների վերաբերյալ՝ ներկայացնելով մասնակցի անվանումը և հարկ վճարողի հաշվառման համարը:

1.2 Գնահատող հանձնաժողովի բացման նիստի 26.04.2019 թիվ 2 որոշմամբ, ղեկավարվելով Կարգի 43-րդ կետի 4-րդ ենթակետով առաջին տեղը զբաղեցրած ՊՌՈ Ինվեստ, Բաղդասարյանս Գրուպ, Հպարտ Քաղաքացի ՍՊ ընկերություններից էլեկտրոնային փոստի միջոցով պահանջվել է երեք աշխատանքային օրվա ընթացքում՝ մինչև 02.05.2019 ներկայացնել Կարգի 32-րդ կետի 1-ին ենթակետի «զ» պարբերությամբ սահմանված՝ առաջարկվող ապրանքի անվանումը և տեխնիկական բնութագիրը /ամբողջական նկարագիր/:

2. <u>Հանձնաժողովն արձանագրեց.</u>

2.1 Կարգով սահմանված ժամկետում Կոմիտեից 02.05.2019 առաջին տեղը զբաղեցրած մասնակիցներից հայտը ներկայացնելու օրվա դրությամբ հարկային մարմնի կողմից վերահսկվող եկամուտների գծով ժամկետանց պարտավորությունների վերաբերյալ ստացվել է դրական եզրակացություն /կցվում է/:

2.2 Սույն արձանագրության 1.2 կետով նշված Կարգի 32-րդ կետի 1-ին ենթակետի «զ» պարբերությամբ պահանջվող փաստաթղթերը սահմանված ժամկետում ներկայացվել են ՊՌՈ Ինվեստ, Բաղդասարյանս Գրուպ, Հպարտ Քաղաքացի ՍՊ ընկերություններից կողմից և գնահատվել բավարար /կցվում են/:

3. <u>Հանձնաժողովը որոշեց.</u>

3.1 Հիմք ընդունելով վերոգրյալը ընտրված մասնակից ճանաչել՝

ՊՌՈ Ինվեստ ՍՊԸ՝ 6-րդ չափաբաժնով

Բաղդասարյանս Գրուպ ՍՊԸ՝ 7-րդ չափաբաժնով

Հպարտ Քաղաքացի ՍՊԸ՝ 2-րդ չափաբաժնով

Ընդունվել է որոշում. կողմ՝ 5, դեմ՝ 0

3.2. Հաստատել պայմանագիր կնքելու որոշման մասին հայտարարության տեքստը /կցվում է/:

Ընդունվել է որոշում. կողմ՝ 5, դեմ՝ 0

Հանձնաժողովի նախագահ՝	_____	Ս. Դավթյան
անդամներ՝	_____	Ս. Քոչարյան
	_____	Լ. Հարությունյան
	_____	Լ. Կաբասակալյան
	_____	Կ. Եսայան
քարտուղար՝	_____	Մ. Նիկոլյան